

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

JUBILES

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՍԸԸ ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷԶ¹

Մխիթարեան Միաբանութիւնը 2000ի Յուլիսին, Վենետիկի եւ Վիեննայի իր պատմական զոյգ ճիւղաւորումներով, միասնաբար որոշեցին անմիջական եւ ամբողջական միութիւն իրականացնել՝ ստեղծելով Մխիթարեան միացեալ մէկ Միաբանութիւն:

Այս պատմական յոյժ բաղձալի իրադարձութիւնը համընկնում էր Մխիթար Վրդ. Սեբաստացու կողմից հիմնուած Միաբանութեան Յ00ամեակին:

Մեր երախտիքն անցեալի բոլոր Մխիթարեաններին՝ թէ՝ Վենետիկի, թէ՝ Վիեննայի, ովքեր իրենց անգնահատելի նպաստն են մատուցել հայագիտութեան ասպարէզում:

Այսօր, 200 տարի է, որ Վիեննայի Մխիթարեանները երբեմնի կայսերական քաղաք Վիեննայում շարունակում են գործել եւ վառ պահել Մխիթար Աբբահօր լուսաւոր ջահը: Նրանք ներկայացնում են Հայ ժողովրդի մեծութիւնը նախ եւ առաջ իր հաւատքի խորութեամբ, այնուհետեւ հայ մշակոյթի ծառայութեան եւ տարածման գործում: Դարերի ընթացքում յաղթահարելով բազում խոչընդոտներ՝ Մխիթարեանների ոգին միշտ մնացել է անկոտրուն: Ամէնուր, որտեղ ոտք են դրել նրանք եղել են զօրաւոր. նրանք մեր դարաւոր ու փառապանծ հայ մշակոյթի, գիտութեան եւ լուսաւորութեան տարածողներն են եղել ողջ եւրոպական հայագիտական աշխարհում:

1 Այս գեկոյցը հանրութեան է Յերկայացուել Երեւանում, Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի դահլիճնում տեղի ունեցած գիտաժողովի շրջանակներում, կազմակերպուած՝ ՀՀ Սփիտոֆի նախարարութեան, ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի և Մխիթարեան Միաբանութեան կողմից, 10-11 Հոկտեմբեր 2011ին:

Բոլորիս էլ քաջ յայտնի է նրանց խոհուն, խորիմաց, նուիրեալ ներդրումը հայագիտութեան մէջ: Անուրանալի է նրանց թողած մնայուն աշխատութիւնները մատենագիտութեան, լեզուաբանութեան, դասական գրականութեան, թարգմանութեան, պատմութեան եւ մշակոյթի բնագաւառում: Մեծ է եղել նրանց վաստակը նաեւ հայ դրամագիտութեան զարգացման ասպարհում:

Դրամագիտութեան զարգացումը մեծապէս պայմանաւորուած է այն մարդկանց գործունէութեան հետ, որ կորուստից փրկում եւ հաւաքում են տարբեր դարաշրջաններից մնացած հին մետաղէ դրամները: Այդ մաշուած, խունացած դրամներն են կենդանի վկանները տուեալ երկրի քաղաքական պատմութեան, նրա տնտեսութեան, երկրի առեւտրական կապերի եւ դրամական շրջանառութեան ճշմարիտ ներկայացնողն ու բացայատողն, որոնք ներկայացնում են տուեալ դարաշրջանի դրամաշրջանառութեան ամբողջական պատկերը:

Դեռեւս վերածննդի դարաշրջանում է առաջացել առաջին հետաքրքրութիւնն հին մետաղէ դրամների նկատմամբ: Եւրոպայում ԺՀ դարի երկրորդ կէսից երեւան են գալիս գիտական առաջին դրամագիտական կենտրոնները, ուր հին մետաղէ դրամների հետազօտումը դառնում է աւելի առաջնահերթ, իսկ յետագյում թեւակոխում է իր պատմութեան գիտահետազօտական շրջանը՝ կապուած մի կողմից անտիկ շրջանի, միւս կողմից Մերձաւոր Արեւելքի միջնադարեան դրամների ընդգրկմամբ: Հայկական դրամագիտութեան զարգացումը խթանուած է ինչպէս հայգիտութեան, այնպէս էլ արեւելագիտութեան պահանջների մղումով: Որոշ ժամանակ անց դրամագիտական եւրոպական կենտրոններում սաղմնաւորուեց եւ հետաքրքրութիւն առաջացաւ հայկական դրամագիտութեան նկատմամբ: Վենետիկի Մխիթարեանները առաջինն եղան, որ ուշագրութիւն դարձրեցին անտիկ եւ միջնադարեան մետաղէ դրամների հաւաքաղման եւ նրանց ուսումնասիրութեան խնդիրներին: Հայոց իրականութեան մէջ Մխիթարեան միաբանութիւնը Վենետիկի Ս. Ղազար կղզում, սկսեց լրջօրէն զբաղուել այդ խնդրով եւ դարձաւ հայոց դրամների հաւաքման ամենախոշոր կենտրոնը: Մխիթարեանները դրամագիտական տուեալները օգտագործեցին հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող խրթին հարցերի բացայացման մէջ:

Ինչ վերաբերում է Վիեննայի Մխիթարեաններին, երախտագիտութեամբ եւ վստահութեամբ կարող ենք ասել, որ Մխի-

թար Աբբահօր զաւակները Վիեննայում շարունակեցին արարել եւ հայ դրամագիտութեան պատմութեան մէջ, մասնաւորապէս Կիլիկեան հայկական դրամների հետազօտման գործում ամենանշանաւոր ներդրումը ունեցան: Հայ դրամագիտութեան պատմութեան մէջ Հ. Կղեմէս Վրդ. Սիպիլեանի երեւան գալը մեծ երեւոյթ էր: Անձ դրամագիտական սիրով համակուած, ամբողջ իր կեանքը նուիրեց հայ դրամագիտութեանը, մասնաւորապէս Կիլիկիայի հայկական դրամների հետազօտմանը նրա պատմութեան՝ ոսկէ միջուկին: Եւրոպական հետազօտողների մօտ նա «Նշանաւոր դրամագէտ» եւ հնագէտի համբաւ էր ստացել:

Շնորհիւ Հ. Կ. Սիպիլեանի ջանքերի հայ ժողովուրդն ունեցաւ հարուստ եւ ճոխ հաւաքածու, որ խնամքով եւ փայփայնքով այսօր պահւում է Վիեննայի Միքանութեան պահոցներում: Դրամագէտը ստեղծեց եւ թողեց սերունդներին մնայուն մի աշխատանք, որ իր կարեւորութեամբ շատ արժէքաւոր գործ էր տուեալ ժամանակաշրջանի համար: Նոյնիսկ այսօր առանց ներկայութեան այդ մենագրութեան հնարաւոր չէ սկսել եւ զբաղուել Կիլիկեան դրամների հետազօտմամբ: Աշխատանքը յայտնի է «Դասաւորութիւն Խուրենեան Դրամոց»² խորագրով: Այդ գիրքը հիմնաքարն է Կիլիկեան հայկական դրամների, այդ գրքով է սկսւում առաջին գիտական դասակարգումը եւ լուսաբանումը, որտեղ Հեղինակը ներկայացնում է Կիլիկեան Հայաստանի դրամների վերլուծութիւնը: Հեղինակը մանրամասնօրէն ստուգաբանել է մինչ այդ եղած Կիլիկեան դրամների բոլոր տուեալները:

Սիպիլեանը ստեղծեց դրամագիտական գրականութիւն հայերէնով, որից յետոյ այն օտար լեզուներով ներկայացրեց Եւրոպացիներին: Նրա կողմից քննարկուած են Կիլիկեան Հայաստանի Հեթում Ա. ի երկեզուեան դրամը, Լեւոն Գ. ի պղնձէ դրամներից մէկը, որտեղ դրամի դիմերեսին պատկերուած է խաչ, իսկ դարձերեսին առիւծ առանց խաչի: Անդրադառել է Սմբատի արծաթ դրամի դարձերեսի երկառիւծ պատկերատիպերին: Ներկայացրել է Օշինի արծաթ դրամը՝ ձիաւորի պատկերատիպով: Ներկայացնելով իւրաքանչիւր գահակալի դրամը՝ դրամագէտը է դրամի հայերէն խորագրութիւնները ամենայն մանրատալիս է դրամի հայերէն խորագրութիւնները ամենայն մանրամասնութեամբ: Անրադառնում է երկեզուեան դրամներին: Մանրամասնորէն քննարկում է Կոստանդին Բ. ի ոսկէ դրամը եւ գա-

2 ՍիՊԻԼԵԱՆ, Հ. Կղեմէս Վ., Դասաւորութիւն Խուրենեան Դրամոց, Մխիթարեան տպարան, Վիեննա 1892:

լիս է եզրակացութեան, որ դրամը շքադրամ է հիմնականում՝ յենուելով դրամի կշռային համակարգի վրայ, քանի որ չէր համապատասխանում տուեալ ժամանակի բիւզանդական եւ արաբական դրամների դրամակշռային համակարգին:

Դրամագէտը ծնուել է Կոստանդնապոլսում 1824ի Փետրուարի 17ին: Մկրտութեան անունն է Մկրտիչ: Վիեննայի Մխիթարեանները 14 տարեկան պատանու առջեւ բացում են իրենց վանքի դռները 1838ին, իսկ չորս տարի անց նա դառնում է Միաբանութեան անդամ եւ ձեռնադրուում է քահանայ: Միաբանութեան Աբբահայր Գեր. Արիստակէս Ազարեանի ջանքերով սկիզբ է դրուում դրամագիտական հաւաքածուի ստեղծմանը, որն յետագյում իր ծաւաներով պէտք է մեծանար եւ դիտական հիմքերի վրայ ուսումնասիրուէր՝ դառնալով միաբանութեան եւ հայ մշակոյթի մնայուն հարստութիւնը:

Միանալով Ազարեանին՝ Միպիլեանը սկսում է իր առաջին քայլերը կատարել այդ բնագաւառում եւ իր նպաստը բերել այդ գործում: Իր նամակներում նա երախտագիտութեամբ է արտայայտում Գեր. Ազարեանին եւ յիշատակում է, որ նրան է պարտական իր դրամագիտական հմտութեան մէջ:

Հայկական դրամների հայթայթման եւ կորուստից փրկելու մտահոգութեամբ համակուած՝ Միպիլեանը կատարեց երկար ուղեւորութիւններ կ. Պոլիս, Զմիւռնիա, Կարին, Թէհրան, Վան, Թիֆլիս, Էջմիածին, Խսապահան եւ դէպի նուիրական Կիլիկիա: Այդ որոնումները թելագրուած էին հայ դրամագիտութեան մայր մատեանն ստեղծելու նրա մեծ բաղձանքից, որ ցաւօք դրամագէտի վաղաժամ մահուան պատճառով հնարաւոր չեղաւ գրքի ամբողջական հրատարակումը տեսնել տպագրուած: Արդէն ճանաչուած դրամագէտը իր անբասիր գործունէութեան համար 1875ին արժանացաւ Վիեննայի «Դրամագիտական ընկերութեան» («Numismatische Gesellschaft») թղթակից անդամութեան, իբրեւ յունական եւ հայկական դրամների մասնագէտի, իսկ 1876ին Սուլթան Աբդուլ Ազիզի կողմից հռչակուեց Կոստանդնուպոլսի Օսմանեան թանգարանի փոխանօրէն, քանի որ նա դասակարգել եւ որոշել էր թանգարանի ամբողջ դրամագիտական հաւաքածուն: Միպիլեանը իր գործունէութեան սկզբից 1845ից մինչեւ մահ զբաղուեց դրամագիտութեամբ՝ նուիրելով իրեն այդ զարմանահրաշ աշխարհին: Նշանաւոր երեւոյթ էր ԺԹ. դարի համար Հայ դրամագիտութեան պատմութեան մէջ Հ. Կ. Միպիլեանի յետմա-

հու մենագրութեան հրատարակումը: Արդէն 1846ից նա սկսել է աշխատել իր «Դասաւրութիւն Ռուբինեան դրամոց» մենագրութեան վրայ: Այս աշխատութեան ստեղծումը կապուած է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անուան հետ: Սիպիլեանի մենագրութեան հիմքում ընկած է Վիեննայի Մխիթարեան թանգարանի հայկական դրամների հաւաքածուն, որն ստեղծուել էր իր իսկ ջանքերով: Նրան քաջ յայտնի էին տուեալ ժամանակի հայկական դրամների բոլոր հարուստ հաւաքածուները, որ պահում էին եւրոպական թանգարաններում: Նա նամակագրական կապեր էր հաստատում իր ժամանակի եւրոպացի հնագէտների եւ դրամագէտների հետ, ինչպիսին էին՝ Բրուէն, Բարթոլոմէյը, Լանգլուան, Շլիմանը, Թիմոնը: Սիպիլեանի ծաւալած գործունէութիւնը եւ նրա աշխատութիւնը շատերի համար դարձաւ խթան, որպէսզի զբաղուէին հայկական դրամների ուսումնասիրութեամբ:

Յայտնի է, որ հայ դրամագիտութեամբ սկզբում զբաղուէլ են օտարները: Նրանց կողմից թոռուցիկ հաղորդումներ էին տրում եւ յաճախ սխալ մեկնաբանութեամբ, առանց հայոց լեզուի իմացութեան եւ պատմութեան մեկնաբանութեան: Հ. Կ. Սիպիլեանի աշխատութեամբ առաջացաւ մեծ հետաքրքրութիւն դէպի Կիլիկեան հայկական դրամները: Հայ ազգային դրամների նկատմամբ խորանում է գիտական հետաքրքրութիւնը: Վիկտոր Լանգլուան հանդէս եկաւ Կիլիկեան Հայկական դրամներին վերաբերող յօդուածներով, որն յետագայում ամփոփուեց Numismatique de l'Arménie au Moyen Age³ իր հեղինակած գրքում: Վիկտոր Լանկլուան տուեալ ժամանակի համար արժէքաւոր գործ էր կատարել, քանի որ այդ գրքով Արեւմուտքը ծանօթացաւ հայ դրամներին: Լանկլուայի նշուած գրքում տեղ էին գտել նրա հետազոտութիւնները Ռուբինեան դրամների պատկերատիպերի ծագման մասին, Օշինի պղնձէ դրամների վերաբերող խնդրին, նաև Թորոսին վերաբրուած դրամին մասին: Լանկլուան իր պրատումներով անդրադարձաւ նաեւ Լեւոն Ա.ի դրամին: Սիպիլեանը շրջանցելով օտար դրամագէտի գրքում տեղ գտած սխալներն, այնուամենայնիւ, գնահատեց դրամագէտի աշխատանքը, համարելով տուեալ ժամանակի համար արժէքաւոր գործ, քանի որ աշխատութիւնը ֆրանսերէն լեզուով էր եւ օտարները իրենց համար բացայացտեցին մի նոր աշխարհ: Արեւմուտքը հայ դրամների միջոցով ծանօթացաւ հայոց աշխարհին: Սիպիլեանը իր հետազոտութիւններով տուեց դասակարգման

³ LANGLOIS, V., *Numismatique de l'Arménie au Moyen Age*, Paris 1855.

իր չափագիտական տեսութիւնը, որ կարեւոր աղբիւրագիտական նշանակութիւն ունի հայ դրամագիտութեան համար: Շատ հարցերում չընդունելով Լանկլուայի դասակարգումը՝ այնուհանդերձ այս երկու դրամագէտները՝ Վիկտոր Լանդլուան եւ Սիպիլեանը, առաջիններն էին, որոնց ջանքերով հիմնադրուեց եւ իր շարունակութիւնը ունեցաւ Հայոց Կիլիկեան դրամների հետազոտման պատմութիւնը:

Արդէն ժմ. դարի երկրորդ կէսին, Հ. Կ. Սիպիլեանին յայտնի էին Կիլիկեան 3.000 հայատառ դրամներ: Նրա դասաւորութիւնը բոլորովին նոր էր, եւ նրա կողմից ստեղծուած դասակարգման սկզբունքը երկար ժամանակ որպէս հիմք մնաց եւ կիրառուեց: Դրամագէտը մի շարք յօդուածներով հանդէս եկաւ մինչ գիրքը կը տպագրուէլ: Դրանցից էին Լեւոն Ա.ի պղնձէ դրամի մասին ուսումնասիրութիւնը: Նա անրադարձած է Հեթում-Զարէլ արծաթ դրամներին, շարադրեց հայ դրամներին նուիրուած ծաւալուն յօդուած⁴:

Խօսելով Սիպիլեանի դրամագիտական հետաքրքրութիւնների եւ նրա մարդ տեսակի մասին՝ պահպանուել են դրամագէտի նամակները՝ ուղղուած դրամագէտ Հ. Սիմոն Անտոնեանին, որն եղել է դրամագէտ եւ դրամահաւաք (մասնաւորապէս հռոմէական եւ հայկական դրամների): Այդ նամակներից տեղեկանում ենք, թէ ինչպիսի մտահոգութեամբ եւ ջերմութեամբ է Սիպիլեանը արտայայտում իւրաքանչիւր դրամի ձեռք բերման կամ դրամի պատմական արժէքի մեկնաբանութեան մասին: Այս նամակների չնորհիւ մի ամբողջական պատկեր ենք ստանում, թէ ինչպէս է կազմուել Վիեննայի Միխիթարեան միաբանութեան դրամագիտական հաւաքածուն, որքան ժամանակ եւ ջանք է պահնջուել իւրաքանչիւր դրամի ձեռք բերման համար, որպէսզի միաբանութեան հաւաքածուն դառնայ կատարեալ: Այդ փոքրիկ մետաղէ յուշարձանները կենդանի վկան են պատմական ժամանակաշրջանների, որոնց ձեռք բերումով Վիեննայի Միաբանութեան հաւաքածուն հարստացաւ: Ահաւասիկ բերենք մի քանի օրինակ նամակներից⁵.

4 Նամակները վերծանել էր Վիեննայի Միխիթարեան Ռիխտի ընդի. Աբբայ Հ. Գրիգորիս Վրդ. Մանեանը եւ «տպագրուել ՀՊՀ յուշամատեանում, նուիրուած Հ. Կոկոմէս Վրդ. Սիպիլեանի մահուան 100ամեակին: Սիպիլեանի մամակմերը», ANS, IV, 1980 editors D. Kouymjian and Y. T. Nercessian.

5 Խոյն, Հայ դրամագիտական հանդէս IV, 1980, 19-26:

1868 Յունիս 8/20 Կ. Պոլիս

... շատ մը Ռուբինեան դրամներ առեր եմ, որոնց մէջ Տարսոնի կոստանդինի արծաթը կայ. աղէկ պահէ կը խնդրեմ, հեք տեղ մը չկայ... Ասիկա Պոլիս գտայ... ջանա՛, որ մեր թանգարանին համար հոգ տանիք:

1. 1869 Մայիս 10/22 Մարտուան

... Սա Ռուբինեան Դրամները աւելցնելու մի ջանար, բայց եթէ միայն մաքուր կամ հազուագիւտ կտորներով: ՇինեԱԼ ի ՔՂՔ ՏԱՐՍՈՆ գրութեամբ ստակը Պոլիս արծաթագործներէն գնեցի: Նոյնպէս Լեւոնի երկդրամեանը եւ Հեթմոյ երկեզուեանը Պոլիսի կեսարացիէ մը գնեցի: Հոս տեղս ամենեւին հնադրամ չկայ. եթէ ըլլայ ալ ստակ չունիմ. մէկ աղուոր Միհրդատեայ չորեգդրամեան մը կայ, բայց ես եւ ոչ 200 ֆուանքի առնելու յոյս ունիմ... Թրիեստ Տրէկըին գիր մը պիտի գրեմ ջանալու համար որ Samosi պղինձը ձեռք ձգենք, վասնզի շատ հազուագիւտ կտոր մըն է ու մեզի անհրաժեշտ հարկաւոր:

1869 15 Կ. Պոլիս

... Միայն Պոլիս հատ մը Ռուբինեան Լեւոն Բ.ի արծաթ մը գնեցի Լեհոն ԹԱԳԱԼՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ գրութեամբ, որ հայաստանեայց բառին համառօտութիւնն է. աս գրութեան Լեւոնի դրամները շատ հազուագիւտ են...

1870 Սեպտեմբեր 19 Սերա

գանք Ռուբէնի հայ դրամոց վրայ: Գիտէք որ Վիեննայի կայսերական թանգարանը երկու արծաթ ունին. մէկը կոստանդինի մէջ մալ Լեւոն Բ.ի օծման դրամներու տարբերութիւնը, որ մէնք չունինք եւ սուստ է. արդ Աթէնք հատ մը գնեցի, որով ամբողջութիւն մեղաւ նոյն շարքին: Ուրիշ փոքրիկ լուր մըն ալ տամ: Հատ մը Լեւոն Գ.ի աղուոր արծաթ մը գնեցի. շատ մաքուր պահուած, որուն ընթերցուածն է. Ա. Լէոն ԹԱԳԱԼՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ. Բ. ՇԻՆԵԱԼ ի ՔԱՂԱՔՆ ի ՍԻՍ: Թէ-գանձու քիչ մը արժեց ինծի, ի վերայ այսր ամենայնի գոհ եմ, պիտեւ քիչ մը արժեց ինծի, ի վերայ այսր ամենայնի գոհ եմ, վասնզի թագաւորական լեցուցինք... Առաջիկայ Զորեքշաբթի ճամբայ կ'ելլեմ Աստծով Զմիւռնիա երթալու... Յոյս ունիմ Լեւոն Բ.ի կիսադրամ մը ձեռք ձգելու, որ շատ մաքուր է: Լամպրոս

Արտաւազգեայ արծաթ մը ունեցեր է, բայց շատ աւրուած ու խեղճ վիճակի մէջ ու Զուիցերիայի գերմանցու մը ծախեր է: Ինծի խօսք տուաւ որ ինչ որ գտնելու ըլլայ, թէ Տիգրան եւ թէ ուրիշ հայկական բաներ, ամէնքն ալ ինծի համար պիտի պահէ:

1871 10/22

... Աս մօտերս Լամպրոս ինծի նամակ մը գրեց, որուն մէջ կը ծանօթացնէ թէ Արտաւազգեայ գեղեցիկ արծաթ մ՞ունի ու իբր վերջին գին 1500 ֆրանք կը պահանջէ... Զեզի խնդիրք մը ունիմ, կ'աղաչեմ, չզլանաք: Կ'ուզեմ Ռուբինեան դրամոց վրայ ընդարձակ յօդուած մը գրել ու Զեզի դրկել, որ գերմաներէն թարգմանէք, բայց հարկաւոր է որ իմ հայերէն ձեռագիրս Ռուբինեան դրամոց վրայ գրածս ինծի դրկէք, որպէսզի մէջէն զանազան նիւթեր առնեմ ու կրկին դարձեալ Զեզի ետ կը դարձնեմ թէ որ կ'ուզէք:

1872 3

Ինծի շատ ծանր կու գայ, որ ես բերնէս կտրեմ ու 30-40 ֆրանքով հայու դրամներ առնեմ.... Կապարէ կնիք մը տեսայ, մէջտեղն կոտրած, որուն մէկ կողմը հայերէն եւ միւս կողմը յունարէն, հայերէնը կը գրէ, դանի թագաւորի: Վեր ի վերոյ զննեցի, երբ ձեռքս անցնի, ճշգրիտ նկարագրութիւնը ձեզի կ'ընեմ: Կարծեմ 20 ֆրանքի ձեռք պիտի ձգեմ... տեղ մը 10 հատ Ռուբինեան դրամներ կան, մէջը երեք հատ աղէկ են, մէկալները՝ միջակ. մինչեւ 46 ֆրանք տուի, ինքը 69 ֆրանք կ'ուզէ... Ուրիշ տեղաց ալ լուր մառի թէ շատ Ռուբինեան արծաթներ եկած են ու ամէնը մէկանց կ'ուզեն ծախել, շապիկս պիտի ծախեմ ու գնել ջանամ....

1876 մարտ 1 Կ. Պոլիս

... Ես Եգիպտոս չգացի եւ եւրոպացոց հետ ճամբորդութիւն չըրի: Ուզեցի միայն Անսամբլ ու Կիլիկիա երթալ, բայց Ասորոց կողմը քոլերա է: Հիմա զբաղուած եմ Կիլիկիայի ճամբորդութեանս պատմութիւնը գրել, որ հայերէն ընդարձակ ու գաղղիերէն համառօտ պիտի գրեմ ու տպել տամ քանի մը պատկերով: Իսկ այս մօտ ատեններս Ռուբինեան դրամոց դասաւորութեան վրայ համառօտ գիրք մը շինեցի ու վեց lithographie տախտակներու վրայ 78 Ռուբինեան դրամոց պատկերները նկա-

բել տուի: Արդէն տախտակները պատրաստ են ու ձեռագիրը ամսէ մը տպագրութեան պիտի տամ Աստուծով, թէ հայերէն թէ գաղղիերէն, զատ զատ կազմուած: Իմ քովի Ռուբինեան դրամոց թիւը 800 անցած է ու ես ձեզի կը խոստանամ, որ վանքին Ռուբինեան դրամները մինչեւ այս տարուան վերջը 1000ի հասցնեմ ու մէջը բաւական աղուոր դրամներ ալ գտնելով: Կրնամ ըսել որ հիմա հաւաքածոյիս նման հասնող Ռուբինեան հաւաքածոյ մը չկայ: Մօտերս 52 հատ չեթում եւ ջաբէլ գնեցի տասական դուրուշի: Ամէնն էլ մաքուր:


Սիպիլեանը նաեւ հանդիսացաւ առաջին հետազօտողը եւ առաջին կիլիկեան հայկական գանձի դասագարկողը: Գանձը յայտնաբերուել էր 1870ի Իզմիր-Անկարա երկաթուղու շինարարութեան ժամանակ: Գանձը պարունակում էր, համաձայն դրամագէտի, 500 արծաթէ դրամ, որն ամփոփուած էր կաւանօթի մէջ: 50 դրամը յանձնուում է Օսմանեան թանգարանին իսկ մնացածն ուղարկուում է դրամահատարան՝ մետաղը հալելու եւ վերաօգտործելու նպատակով: Երջանիկ պատահականութեամը այն չի հալում քանի որ դրամները ձեռք է բերում դրամահատարանի տնօրէնը՝ հայզգի Միհրան Պէյ Տիւզեանը, որ վճարում է արծաթի արժէքը եւ դրամները յանձնում Սիպիլեանի քննութեանը: Ուսումնասիրելով գանձը՝ դրամագէտը դասակարգում է 5 տարբեր ոճեր 14 տարբերակներով⁶:

Սիպիլեանի մենագրութիւնը 1876ին պէտք է հրատարակուէր, ուր պէտք է ընդգրկուէր վանքի 1.000 նմոյշ եւ այդպէտք է ներկայացուէր 6 տախտակով, որպէսզի յստակ պատկերացնէին կիլիկեան Ռուբինեան դրամների պատկերագրութիւնը: Ցաւօք վաղաժամ մահը դրամագէտին թոյլ չի տալիս տեսնելու դրքի հրատարակումը: 54 տարեկան հասակում 1878ին ճամբորդութեան ընթացքում հրանդանում եւ իր մահկանացուն է կնքում հայ դրամագէտը: Սիպիլեանը բացի դրամագիտական յօդուածներից ունի նաև այլ թեմաներին նուիրուած յօդուածներ «Վանայ կողմանց Քիւրդ ցեղերու վրայ տեղեկութիւն մը»⁷ կամ «Համառօտ աշխարհագրութիւն ծաղկոցի տղոց համար»⁸:

6 SARYAN, L., *Provenance of the 1873 Sibilian Hoard of Levon I Trams*, Armenian Numismatic journal, Vol. XXI, 1995, 47-51.

7 Սիպիլեան, Հ. ԿՂԵՄԵԿ Վ., Վանայ կողմանց Քիւրդ ցեղերու վրայ տեղեկութիւն մը, ի Մասիս, թ., 1895:

8 Նոյնի, Համառօտ աշխարհագրութիւն ծաղկոցի տղոց համար:



Նրա մահից յետոյ ձեռագրի հրատարակման հարցը դառնում է հրատապ եւ առաջնային: Այդ խնդրով մտահոգուած սկսում է զբաղուել Հ. Գրիգորիս Գալէմքեարեանը: Նրա կողմից որոշ ճշտումներ կատարելուց եւ որոշ խոչընդոտներ յաղթահարելուց յետոյ աշխատութիւնը ստանում է ամբողջական տեսք: 1892ին «Դասաւորութիւնը Ռուբինեան դրամոց» մենագրութիւնը մտնում է Վիեննայի Միջիթարեան տպարան: Դասական այս մենագրութիւնը, որ նուիրուած է Կիլիկիայի հայկական դրամներին, ներկայանում է հայ դրամագիտութեան՝ ընդհանուր ակնարկով, մատենագրական ցանկով եւ դրամագիտական դրականութեամբ: Գրքի մէջ տեղադրուում են Ռուբինեան թագաւորների ժամանակագրական ցուցակը, լուսապատկերների ցուցակը, մատենագրութիւնը եւ ի վերջոյ գրքի առաջին էջում դրամագէտի լուսապատկերի տեղադրումը՝ ի գիտութիւն սերունդների: Աշխատութիւնը մնաց մինչ օրս կարեւորագոյն աղբիւր հայ դրամագիտութեան համար: Միպիլեանի գրքի հրատարակումից յետոյ 100 տարի պէտք է անցնէր, որ ասպարէզ գար Զ. Պտուկեանի «Կիլիկեան Հայաստանի դրամներ»⁹ նոր ստուարածաւալ աշխատութիւնը, ուր հեղինակը Միպիլեանի կողմից արդէն ուսումնասիրուած 3.000 դրամներից յետոյ մէկ դար անց դրամագիտական հանրութեան ներկայացնում է իր նոր դասակարգումը քննութեան ներքոյ ունենալով 12.000 նոր կիլիկեան հայկական դրամների շարքը: ի դէպ այդ աշխատութեան հրատարակումը հայերէն լեզուով 1963ին իրականացնում են կրկին Վիեննայի Միջիթարեանները:

Միպիլեանին համարում են հայ դրամագիտութեան հայրը: 1978ին մէծ հանդիսութեամբ նշուեց նրա մահուան 100րդ տարելիցը: Իբրեւ երախտագիտութիւն նրա թողած գործի ԱՄՆում հրատարակուեց Հայ դրամագիտական Հանդէսի չորրորդ հատորը, որտեղ ամփոփուեցին այդ ժամանակի ճանաչուած դրամագէտների յօդուածները նուիրուած հայ դրամագիտութեան խնդիրներին: Հանդէսի այդ հատորը մնաց՝ որպէս շքեղ յուշամատեան՝ նուիրուած Վիեննայի Միջիթարեան մէծ դրամագէտին:

Այժմ անրադառնանք յաջորդ Միջիթարեան դրամագէտին, որ հանրայայտ ականաւոր գործիչ է. Յակոբոս Վրդ. Տաշեանն է:

Տաշեանը, բացի հայ բանասէր, լեզուաբան, հայագէտ լինելուց, նա հայ դրամագիտութեան պատմութեան մէջ հռչակուեց

⁹ ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա 1963:

իր «Արշակունի դրամներ» աշխատութեամբ։ Արդէն 20րդ դարի առաջին իսկ տարիներից հին հայոց դրամներին վերաբերող շատ յօդուածներ լոյս տեսան։ 1904ին Վիեննայում լոյս է տեսնում Ալեքսանդր Ասպետ Պետրովիչի աշխատութիւնը՝ «Արշակունի դրամներ» խորագրով հարուստ հաւաքածուն։ Աշխատութեան մէջ հեղինակը դրամների մի առանձին խումբ վերագրում է Հայաստանին։ Քննելով կատարած գործը՝ «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում Հ. Յակոբոս Վրդ. Տաշեանը հայ-պարթեւական առնչութեան համառօտ պատմութեան եւ Արշակունեաց դրամների ծաւալուն վերլուծութեամբ հանդէս եկաւ՝ տալով իր մեկնաբանումները Ալեքսանդր Պետրովիչի «Արշակունի դրամներ»ի շուրջ¹⁰։

Տաշեանի քննախօսութիւնը բարձրացրեց հետաքրքրութիւնը Արշակունեաց դրամների հարցում։ Տաշեանը ներկայացնում է պարթեւահայ պատմութիւնը, քննարկում է արշակունի դրամները հիմնուած Պետրովիչի «Արշակունի դրամներ» մենագրութեան հիման վրայ։ Անդրադառնում է հեղինակի կողմից ներկայացնուած Վաղարշակի, Արտաշէս Ա.ի, Արտաւազդ Ա. եւ Տիգրան Մեծի դրամները։ Պետրովիչի առաջ քաշած վարկածները չընդունուեցին, այլ ենթարկուեցան քննադատութեան։ Հայ արշակունեաց դրամներ, որի մասին Պետրովիչը շեշտում էր՝ չընդունուեցին։

Անցեալ դարերի Վիեննայի Մխիթարեան երկու մեծանուն դրամագէտների գործունէութեան կողքին այսօրուայ Վիեննայի Մխիթարեանների դրամագիտութիւնը գտնում է հետազօտման իր նոր կարգավիճակում յանձնին Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեանի, ով կրկին դրամագիտական պահոցների ծանր բանալիները վերցրել էր իր ձեռքը եւ մեծ նուիրումով, անսպառ եռանդով կրկին բացում եւ ուսումնասիրում պահուող հին հայկական դրամները Վիեննայի Մխիթարեան միաբանութեան սենեակներում՝ բերելով իր նոր լոյսը այսօրուայ հայ դրամագիտութեան գարգացման մէջ։

Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեանը ոչ միայն խոր համոզմունքով Մխիթարեան է, այլև հայագէտ եւ դրամագէտ։ Մեծ է նրա ներդրումը հայ դրամագիտութեան մասնաւորապէս Կիլիկեան հայկական դրամների բնագալառում՝ շարունակելով հայ

10 1960ին Վիեննայի Մխիթարեան տպարանը վերահրատարակեց Հ. Յ. Տաշեանի Արշակունի դրամների նուիրուած աշխատութիւնը Ազգային Մատենադարան ՃՂԲ.-Բ. հատորում։

դրամագիտութեան երախտաւոր Հ. Կ. Սիպիլեանի, Տաշեանի գործը, նա նոր պրապտումներ է անում Կիլիկեան հայկական դրամների պատկերագրութեան մէջ: Դրամագէտ-Միսիթարեանը հաւատարիմ մնալով իր կոչմանը, երկար տարիներ ուսումնասիրել, դասակարգել եւ պահպանել է միաբանութեան դրամագիտական գանձարանը նոյնքան խնամքով եւ նուիրուածութեամբ, ինչպիսին էին իր նախորդները: Նա նիւթի խորը իմացութեամբ, սիրով եւ գիտական նոր մեկնաբանութեամբ դասակարգեց վանքի դրամները: Սեքուլեանը, հիմք ընդունելով Զ. Պտուկեանի դասակարգումը, նոր ճշգրտումներ տուեց Վիեննայի Միսիթարեան թանգարանում պահուող դրամական հաւաքածուի նկարագրութեան բացայայտման գործում: Հայագէտ-դրամագէտը 1968ին «Հանդէս Ամսօրեայ»ում հանդէս է գալիս «Այսա Քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ» խորագիրը կրող յօդուածով¹¹: Հեղինակը քննարկում է Հեթում Ա.ի դանդերի մասին եւ եզրակացնում է, որ բացի Սիս եւ Տարսոն դրամահատարաններից, Հեթումի Ա.ի ժամանակ գործել է դրամահատարան նաեւ Այսում, որտեղ եւ հատուել են պղնձէ դրամները, որոնց դարձերեսում խաչերի թեւերը ունեն կէտեր որն արժէքաւոր բացայայտում է: Դրամագէտը եզրակացնում է, որ այս դրամները հատուած են Հեթում Ա.ի գահակալութեան վերջին տարիներին 1267-1271, երբ մամլուքների արշաւանքի պատճառով ստիպուած էին դրամահատարանը Սիսից տեղափոխել նաւահանգստային քաղաք Այսա: Յօդուածագիրը այդ դրամների նմոյշները յայտնաբերել է Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան հաւաքածուի մէջ:

1970ին նոյն «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում հեղինակը հանդէս է գալիս նոր հետաքրքրական յօդուածով «Դիտողութիւններ Լեւոն Ա.ի (1187-1219) դրամներու պատկերատիպերի ծագման մասին»¹² վերնագրով: Հեղինակը, հետազոտելով Լեւոն Ա.ի (իշխան Լեւոն Բ., 1187-1198) պղնձէ դրամը, գալիս է հետեւեալ եզրակացութեան, որ իշխանական պղնձէ դրամի դիմերեսի պատկերը հաւանաբար փորագրուած է գերմանացի փորագրիչ-վարպետի կողմից եւ Փրեղերիկոս Ա. Շիկամօրուս կայսրի դրամի պատկերի նմանակութեամբ է դրուագուած: Դրամագէտը տալիս է նաեւ

11 Սեքուլեան, Հ. Օգոստինոս Վրդ., Այսա Քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ, ի Հանդէս Ամսօրեայ, 1968, թիւ 4-6, 213-218:

12 Նոյն, Դիտողութիւններ Լեւոն Ա.ի (1187-1219) դրամներու պատկերատիպերու ծագման մասին, ի Հանդէս Ամսօրեայ, 1970, թիւ 10-12, 477-488:

դարձերեսի պատկերագրութեան բացատրութիւնը, որտեղ առիւծի գաղափարական նշանը ընդօրինակուած է արեւմուտքից, մասնաւորապէս գերմանացիներից, եւ Լեւոն Ա.ի դրամներում պատկերագրութեան մէջ հանդէս եկող երկառիւծները դրա նմանակման փորձն են: 1960ին «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում տպագրուեց «Լեւոն Բ.ի օծման դրամները»¹³ յօդուածը: Դրամագէտը քննարկում է Կիլիկեան Հայաստանի ոսկէ դրամը, որ համաձայն Զ. Պտուկեանի այն վերագրուած է Լեւոն Ա.-Հեթում Ա.ի: Սեքուլեանը ոսկին վերագրում է Հեթում Ա.-Լեւոն Բ.ի, քանի որ այս երկու թագաւորները միատեղ գահակալած էին: Ոսկի պատկերագրութեամբ արծաթէ դրամները, որոնք նախապէս տրուած էին Լեւոն Ա.ին, վերագրում է Լեւոն Բ.ին եւ կոչւում են Լեւոն Բ.ի օծման դրամներ:

Դրամագէտը անրադարձաւ նաեւ Լեւոն Բ.ի պղնձէ դրամի մակագրութեան խնդրին¹⁴: 1973ին «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում դրամագէտը քննարկում է այդ խնդիրը եւ Լեւոն Բ.ի պղնձէ դրամների վրայ կատարած հետազօտութիւնը կապուած Լեւոնի հօր անուան հետ գալիս է հետևութեան, որ դրամների վրայ Ստեփանէ, թէ Ստեփանէ անունների արձանագրութիւնը նա կարդում է Ֆ տառով: Համաձայն իր վարկածի արդէն 1187-1199 կամ նոյնիսկ աւելի վաղ հայ այբուբենի մէջ «Ֆ» տառի գոյութիւնը եղել է ուստի դրամի վրայի արձանագրութիւնը Լեւոնի հօր անուան հետ նա կարդում է ոչ թէ «Փ»ով այլ «Ֆ»ով: ոչ թէ Ստեփանէ այլ Ստեփանէ:

Շարունակելով ուսումնասիրել թանգարանի հաւաքածուն՝ դրամագէտը Օշին (1307-1320)¹⁵ թագաւորի դրամները նորից վերանայեց եւ այն դասակարգեց համաձայն նոր սկզբունքի՝ հիմք ընդունելով Զ. Պտուկեանի դասակարգման տարրերակը: Բացի դրանից նա վերանայեց արաբերէն կրկնադրոշմները, ուր եկաւ հետեւութեան, որ արաբերէն կնիքը դրոշմւում էր տիրողի կողմից սահմանափակ դրամների վրայ, իսկ այն դրամները, որոնք կնքուած չէին, փոխանակւում էին աւելի մեծ գումարի դիմաց, երբ յանձնւում էին: Նրա չնորհիւ նորից վերանայւում եւ կշռում է թանգարանի գանձարանում պահուող իւրաքան-

13 Նոյն, Լեւոն Բ. օծման դրամները, ի Հանդէս Ամսօրեայ, 1960, թիւ 4-6, 204-208:

14 Նոյն, Ստեփանէ: թէ Ստեփանէ, ի Հանդէս Ամսօրեայ, 1973, թիւ 1-3, 81-86:

15 Նոյն, Վիեննայի Միջիքարեան քանգարանի Աւշիմի արժաքները, ի Հանդէս Ամսօրեայ, 1972, թիւ 1-3, 95-110:

չիւր դրամը հատ հատ: Նա տալիս է դրամա-կշռային համակարգի աւելի ճշգրիտ նոր ցուցակ, որ շատ կարեւոր է ուսումնասիրուող դրամագիտական նիւթի խնդիրները պարզելու համար:

Վիեննայի Միփթարեան թանգարանի Լեւոն Ա.ի պղնձէ դանգերի մասին աշխատութիւնը¹⁶, որ գրեց 1970ին կրկին «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում, յօդուածագիրը ներկայացրեց թանգարանի հաւաքածուն իւրաքանչիւր դրամի մանրակրկիտ նկարագրութեամբ: Նա ներկայացրեց իւրաքանչիւր դրամի գրութիւնները եւ խաչի տարբերակները: Բացի դրանից անդրադարձաւ նաեւ Այսաւ քաղաքի դրամահատարանում հատուած դրամներին՝ տալով դրամահատարանի հիմնադրման թուականը Լեւոն Ա.ի գահակալութեան ըրջանում:

1972ին տպագրուում է «Վիեննայի Միփթարեան թանգարանի Լեւոն Գ. (1306-1307) պղինձները»¹⁷ յօդուածը, որտեղ մանրամասնորէն տալիս է դրամի նկարագրութիւնը եւ խաչի տիպի տաստարբերակ: Հետեւելով նրա ստեղծագործական գործունէութեանը՝ տեսնում ենք ինչպիսի ծաւալուն, խորը, մանրակրկիտ, Միփթարեաններին բնորոշ համբերատարութեամբ հետազոտում է կատարել իւրաքանչիւր դրամի որոշման գործում:

Վիեննայի Միփթարեան Միբանութեան անդամ Հ. Օգոստինոս Զաքարի Սեքուլեանը ծնուել է Ռումինիայում 1921ի Սեպտեմբերի 19ին: Գալով Վիեննա 1931ին՝ արդէն 1938ին դառնում է Վիեննայի Միփթարեան միաբանութեան անդամ, իսկ 1944ին ստանում է վարդապետի կոչում: Աւարտելով Վիեննայի ազգային համալսարանի ֆիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան ֆակուլտետը, անցնելով ասորերէնի, արամերէնի, եբրայերէնի դասընթացները՝ 1943ին սկսում է զբաղուել գրական-գիտահետազոտական աշխատանքով: Նա, բացի դրամագիտական ուսումնասիրութիւններից, հանդէս է եկել աղբյուրագիտութեան, ձեռագրագիտութեան, մատենագիտութեան, եւ հայագիտութեան վերաբերող հարցերով: Մեծ է նրա աշխարհաընկալումը. բացի դրամագէտի կոչում ունենալուց, նա չուրջ 70 տարի ծառայում է հայագիտութեան եւ միաբանութեան բարգաւաճման համար այսօր էլ 90 տարեկան հասակում մեծ եւանդով պաշտօնավարում

16 Նոյն, Վիեննայի Միփթարեան թանգարանի Լեւոն Ա. պղինձէ դանգերը, ի Համգետ գէս Ամսօրեայ, 1970, թիւ 1-3, 99-106:

17 Նոյն, Վիեննայի Միփթարեան թանգարանի Լեւոն Գ. (1306-1307) պղինձները, ի Համգետ գէտ Ամսօրեայ, 1972, թիւ 4-6, 225-238, թիւ 7-9, 373-382:

է ԱՄՆում գործող Մխիթարեան վարժարանում՝ փոխանցելով Մխիթար Աբբահօր ոգին եւ շունչը երիտասարդ սերունդներին:

Դրամագիտական աշխարհի զինուորները շատ չեն, բայց իրենց թողած գործով եւ որակով բաւական հզօր են: Ներկայացնելով Վիեննայի Մխիթարեան միաբանութեան տարրեր ժամանակաշրջաններում ապրած եւ ստեղծագործած հայ դրամագիտութեան նուիրեալներին՝ տեսնում ենք՝ որքան են նրանք կարեւորել եւ նպաստել հայ դրամագիտութեան ուսումնասիրութեան եւ զարգացման գործին, որքան հոգի եւ ոյժ են ներդրել այդ բնագաւառի մէջ: Ազգերը իրենց գրաւոր սկզբնաղբիւրներով են ճանանչուած, իսկ դրամները ազգի յուշարձաններն են, ինչպէս մեր ձեռագիր մատեանները, եկեղեցական կոթողները:

Ազգային դրամները մեր պատմութեան անցեալն են, մեր տոկունութեան վկաները: Ահաւասիկ այս գիտակցութեամբ հաւաքագրեցին, ուսումնասիրեցին եւ պահպանեցին Մխիթարեան հայրերը հայոց եւ օտար դրամները՝ ի գիտութիւն եւ հարստութիւն մեր անցեալի եւ ներկայի:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՇԵՂԵԱՆ

Summary

THE CONTRIBUTION OF THE MEKHITARISTS IN ARMENIAN NUMINAMISTICS

ANAHIT MUSHEGHIAN

Everyone is aware of great and consecrate contribution the Mekhitarists made in the development of Armenology. Their contribution was also huge in the development of Armenian numismatology.

This sphere of rich, old Armenian culture attracted the Mekhitarists and they were the first to make own research works exposing to the public the verifying coinages of true, Armenian, national testimonies not only of Artashesian dynasty but also Kilikia. Those coins were in turnover in many different, historical eras of Armenian national existence.

The founder the Armenian numismatology at the Mekhitarists Order in Vienna Fr. Clemens Sibilian later Fr. Hagopos Dashian, Fr. Augustinus Sekulian were those who created in different periods of time aiming the same though. With their living works they spurred strongly Armenian numismatology collecting, investigating and preserving Armenian and foreign coins by the consent and riches to our past and present.

This article is devoted to three consecrate numismats in gratitude for their tireless toil.